կած կարող է ազդեցութիւն ունենալ նորա սրտակութեան վերայ. չկայ ջրանցք, առանց որի հողը կանոնաւոր կերպով չի մշակուի. վերջապէս անհնար է գաղութի դուռը բաց անել ամէն բաղխողի առաջ, որովհետև նա կարող է իւր մէջ առ այժմս միայն 50 հոգի պատսպարել։ Շնորհիւ այդ բանի տասնեակ երեխաներ ընթանում են այն ճանապարհով, որ անդառնալի է. նոքա գնում են բանտ։ Հետևապէս և կարևոր է շինութիւնը ընդարձակել։ Ընկերութիւնը իւր հիմնուած օրից սկսած մինչև այժմս մօտ 60000 ռ. ծախսել է. եթէ ոչ աւելի, գոնէ նոյնքան էլ հարկաւոր է այժմս, որպէս զի ուղղիչ գաղութը իւր համապատասխան վիճակում լինի։ Մինչև մի քանի ժամանակ առաջ ընկերութեան գանձարանը այնպիսի ցաւալի վիճակի մէջ էր, որ շատերի գլխում ծնուեց մի վրդովեցուցիչ միտք՝ փակել այս հիմնարկութիւնը, նախ քան նորա ծաղկելը։ Միայն, երբ բարերարութիւն տրուեց բոլոր վերը նշանակեալ կարիքներին, այն ժամանակ կարելի կլինի համարձակութեամբ ասել, որ Կովկասում «անարգուած» երեխաների ուղղելու գործը իւր պատշաճաւոր դիրքի մէջն է։

Կովկասի ընկերութիւնը հիմք դրեց այդ «աստուածահաճոյ» գործին։ Աւելորդ է անգամ մտածել, որ նա կթողնի այդ գործը կիսատ, կամ որ աւելի վատն է, իւր անտարբերութեամբ կսպանէ նորան իւր սաղմի մէջ։ Անհաւատալի է թւում, որ ընկերութիւնը չուզենայ ջնջել այն անարգանքը, որ նա պատճառում է իւր անմեղ և ձեռնհաս անդամներին։ Այն համակրութիւնը, այն պատրաստակամութիւնը, որ ցոյց տուին մինչև այժմ հասարակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչները, իրաւունք են տալիս կարծելու, որ հասարակութիւնը դժուար բոպէներին օգնութեան կհասնի այն գործին, որը իւր ջանքերի պտուղն է։ Դժուար բոպէն հասել է. Կովկասում դեռահասներ ուղղելու գործը նշանաւոր չափով նիւթական զոհաբերութիւն է պահանջում։ «Փոքունքս այսոքիկ» օգնութեան են կանչում։ Մի՞թէ նոցա կոչը պէտք է մնայ «ձայն բարբառոյ յանապատի»։

Թարգմանութիւն Գ..

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ա. Խաչատեան. Երգեր ու Վէրքեր. Ալէքսանդրապօլ. 1898. 10 կոպ։

Գ. Մռճռեանց. Տիգրօնի կոլանաւորը. Ալէքսանդրապօլ. 1899. 15 կոպ։

Տեղեկագիր Բ. տարեշրջանի Ազգային կըրթարան—Որբանոցի ի Կիպրոս. Գահիրէ. 1899։

Բ. Խալաթեանց. Տան և ընտանեաց Դարի կտակը. Թիֆլիս. 1890. 15 կոպ։

Ֆրանսուա Կոպպէ. Թագի համար. Ողբերգութիւն 5 գործ. թարգմ. ֆրանսերէնից Միքայէլ Մանուչարեանց. Բագու. 50 կոպ։

Վանայ Սաղ, Երկրորդ մաս. ժողովեց Գէորգ Գ. Շէրէնց. Թիֆլիսի հայոց հրատարակչական Ընկ. № 150. Թիֆլիս. 75 կոպ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳ. ՀԱՆԴԻՍԻՑ.

### ԲԱԶՄԱՎԷՊ
*(Սեպտեմբեր ամիս)*

Հայ Ռուսանդք.—Աստմեանց նահատակութեան ժամանակն և այլ հանգամանք.—Բնաշխարհիկ բառարան. — Մխիթար (բանաստ.). — Հանք և իրենց ստուգաբանութիւնն.—Կոստանդնուպօլսէն դէպի Անկիւրիա.—Մարաբա Մծուրնացի կամ կեղծ—Ագաթանգեղոս.—Ընդծովեայ նաւագնացութիւն.—Գաղղ. արդի բանաստեղծութիւն.—Մաղնիսական քուն. — Գրախօսական ակնարկներ.—Վերջին ողջոյնք առ աղաւն Վենետիկ.—Պատասխանէք բանասէրի մը դիտողութեանց.—Հանդէս Հանդիսից. Քաղաքական ամիս.—Ազգային արձագանգ։

### ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ
*(Սեպտեմբեր ամիս)*

Ժողովածոյք առակաց Վարդանայ... ըստ Հայագէտ Ն. Մառի.—Եղիսաբեթուպօլսոյ հասարակութեան այն արտօնութիւնն թէ օտարք չկարենան իւր մէջը բնակիլ, կը կորանցնէ իւր ոյժը.—Պարսկաստանի հայերը. նրանց անցեալը ներկան և ապագան.—Խիկար և իւր իմաստութիւնն.—Տեղեկագիր Յովսէփ Իզմիրեանց գըրական Յանձնաժողովոյ.—Տեղեկագիր քննական ուղեւորութեան մ' ի Հայս Վ. Բելքի և Կ. Ֆ. Լեմանի.—Նոր հրատարակութիւնք. — Ազգային թերթերէ Ծաղկէփունջ. Քաղաքական տեսութիւն։